կեալ առն թէ Զերկոսին եւս սպանէ. և տարեալ զհռոմն յիւր սահմանն որ Ղարաման և Եէտիղուլայ՝ կախեցին, և զբոզաւադսն եղեալ յէշ անցուցանէին խայտառակ ընդ քաղաքս ամենայն։

Իբ–իս (Դեկ.) օր Շաբաթ։ Սինհոդոս եւ ժողով արարեալ ի Սուրբ Նիկողայոս վասն Երուսաղէմայ, շատ խօսք և զրուց եղեալ գործակալութեամբ Մարտիրոս վարդապետին Կաֆայեցոյ՝ աշակերտին Աստուածատրոյ վարդապետին, զի նստեալ Աստուածատուր վարդապետն ի քաղաքն (պարպ) եւ առաքեալ զաշակերտն, զի եկեալ ի քաղաքս ընդ մեծամեծս տեսցէ բան ինչ։ Եւ օրս վերջ խօսիցս եղև, որ ասացին մարդ առաքել ի Պուրսայ, բերել զեղիազար վարդապետն զի ընդ նմա տեսցեն. և կրկին եղև վէր Մուղնեցոյն վասն այսմ։

Իդ օր Բշի. տօն Դաւթայ և Յակոբայ։

Եշի օր (27 Դեկ.) եկն այր մի թղթիւք Պիթլի Ահմէտէն թէ Պարիշեցուցի զՍէյտին հետ Հալպայ եւ փաշային. սոյնպէս և թուղթ մի ի Սէյտիէն թէ Սամիմ սիրելին էր եւ զիս յոյժ զիջոյց, սորա մանսուպ մի տվէք քան զիմն գերագոյն. և թղթիցս բերողին կապայ ագուցին, և ետուն մանսուպ Պիթլիին՝ զԲեսթահլայ և Սէյտիին՝ զՍեւաստիայ։

Իթ–իս Շաբաթ օր բարեկենդան։ Երեկոյիս մօտ ի Զարտախլի համամն երոցք եղև, մեծ տուն մի այրեցաւ և փոյթ մարեցին բռնակալք։ Եւ յետ հասարակել գիշերոյս մեռաւ մայր հօր մերում և գնացաք առ ի ձայնել զԱռաջնորդն ի պաշտօն ննջեցելոյն ի Հրեշտակապետ, եւ ոչ եկն։ Եւ առաւօտին տարաք ի ժամ զննջեցեալն եւ կայր անդ Թադէոս[1]) վարդա-

1) Թաթէոս.